



Սայաթ Նովա

Յիս մե դարիք բուլբուլի պես

Էս Արուֆինի ասած է. դագալի: Էս Էրկու խաղը մի հանգով է, ով որ սովորի Դոստի խաղի ձենով ասի, թե որ շիմանաս հարցրու թե՛ Գոգալար յիղնաղինա բախ, դաստա-բեդաստա թարփանուր:

Յիս մե դարիք բուլբուլի պես, դուն օսկե դափազի նրման.
Էրեսըս դի վուտիդ տակը՝ ա՛նց կաց, փիանդազի նրման.
Յա՛ր, քեզիդ խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմազի նրման.
Աջաիք սուրաթի տեր իս՝ ռանգըդ է գուլգազի նրման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեշը, աջայիք սեյրան իս անում,
Շուխկդ արեգազի նրման է՝ տեսնողին հեյրան իս անում.
Չիգարըս կըրակ իս տըվի, Էրվում իս՝ բիրյան իս անում.
Վո՛ւնց մե գոգալ չէ ունեցի՝ Էտ քու արած նագի նրման:

Շենց իմացի, յա՛ր, քու դուլն իմ, թանգ հախով գրնած չըրաղ իմ,
Յա՛ր, դըռանըդ նընգած ըլիմ, օ՛վ տեսնե, ասե՛ տուսաղ իմ.
Էշխենեդ հիվանդացիր իմ, վո՛ւնց մեռնում իմ, վո՛ւնց թե սաղ իմ.
Ծովի պես ուրդան իմ տալի, գըժվիլ իմ Արագի նրման:

Օվ կու տեսնե, ջունուն կու լի, բարգ Էրեսիդ խալ իս անում,
Էլ ջուքամը դո՛ւն կու քաշիս, շուն մահիս խիալ իս անում.
Յա՛ր, յիս քիզ բարով իմ տալի, շուռ իս գալի, դալ իս անում,
Չունքի խոսկըդ անց է կենում բելլու՝ շահ-անդազի նրման:

Սայաթ Նովեն ասաց՝ գու լամ, շին լաց լի՝ թե ճար ունենամ.
Էլ յիս կու քաշիմ Էս դուսեն՝ թո՛ղ լի ահ ու գար ունենամ.
Յա՛ր, քիզ վրրեն արք ունենամ, մե լավ հխտիար ունենամ՝
Առնում, տանիմ մեջլիսները օսկեջրած սագի նըման: